2025 special issue1

https://doi.org/10.46991/hc.2025.si1.180

Remarks on some historical-cultural developments in the Armenian Highland during the late bronze – early iron ages

Garegin Tumanyan
https://orcid.org/0000-0002-6696-0093
NAS RA Senior Researcher at the Department of Early Archaeology of the Institute of Archaeology and Ethnography, Doctor of Sciences in History
gstumanyan@gmail.com

Keywords - Armenian Highland, Mittani, Harq, Hayk, Armenian culture, burial, seal, chariot.

Formed in Northern Mesopotamia and southern Armenian Highland, Mittani kingdom occupied enormous territory, named "Fertile Crescent" in historiography. In the war against Assyria under Shalmaneser I, Mittani and its allies suffered heavy defeat, yet, continued struggling against Assyria's expansionist ambitions. Armenian Highland's provinces Harq (Turuberan region) and Aragatsotn (Ayrarat region) became powerful centers of resistance. Probably, this was the consequence of migration of population groups intolerant to Assyrian domination to the north. This is evidenced by archaeological data and toponymical parallels, also, data preserved in Armenian historians' works drawn from "Hayk and Bel" legend. Inscriptions of Tukulti-Ninurta I state that the rebellious country of Kadmukhi was occupied and a tribute imposed on it. There are parallels of some Mittani toponyms in Armenian Highland. Possibly, during the discussed period, the population of Mittani migrated in two directions – to the north-west and north-east. The cultural ties between people of Mittani and Armenian Highland covered various spheres: writing, military affairs, glyptics, metalworking, pottery, etc. Some traditions of Mittani were preserved in Armenian Highland and successfully developed later-on. Iron Age culture of Armenian Highland, immediately preceding the ancient Armenian culture (from late period to early phase, inclusive), could be named "most ancient Armenian culture".

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 180-196.

Received: 11.11.2024
Revised: 06.02.2025
Accepted: 19.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Նկատառումներ Հայկական լեռնաշխարհում ուշ բրոնզ – վաղերկաթեդարյան պատմամշակութային որոշ զարգացումների վերաբերյալ

Գարեգին Թումանյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.դ.

Հիմնաբառեր - Հայկական լեռնաշխարհ, Միտանի, Հարք, Հայկ, հայկական մշակույթ, դամբարան, կնիք, մարտակառք:

Կազմավորվելով Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհի հարավում, Միտանին զբաղեցնում էր հսկայական տարածք, որը պատմագիտության մեջ ընդունված է անվանել «արգավանդ կիսալուսին»: Սալմանասար I-ի օրոք Ասորեստանի հետ պատերազմում, Միտանին և նրա դաշնակիցները ծանր պարտություն են կրում, սակայն շարունակում են պայքարել: Դիմադրության հզոր կենտրոններ են դառնում Հարքը՝ Տուրուբերանում և Արագածոտնը՝ Այրարատում: Դա հավանաբար հետևանք էր Ասորեստանի գերիշխանությանը համակերպվել չկամեցող բնակչության դեպի հյուսիս արտագաղթերի՝ : Այդ են վկայում ինչպես հնագիտական տվյալներն ու տեղանվանաբանական զուգահեռները, այնպես էլ՝ «Հայկի ու Բելի» ավանդազրույցից քաղված տեղեկությունները, որոնք պահպանվել են հայ պատմիչների երկերում: Թուկուլթի-Նինուրտա I-ը հայտնում է անհնազանդ Կադմուխի երկիրը նվաճելու և այն հարկատու դարձնելու մասին: Միտանական որոշ տեղանուններ իրենց զուգահեռներն են գտնում Հայկական լեռնաշխարհում: Կարելի է եզրակացնել, որ քննարկվող ժամանակաշրջանում Միտանիի բնակչության արտագաղթը տեղի է ունեցել երկու ուղղություններով՝ դեպի հյուսիս-արևմուտք և հյուսիս-արևելք: «Արգավանդ կիսալուսնի» և Հայկական լեռնաշխարհի ժողովուրդների միջև մշակութային առնչություններն սկսվել են շատ ավելի վաղ և ընդգրկել են տարբեր բնագավառներ՝ գիր, ռազմական գործ, կնքագործություն, մետաղագործություն, խեցեգործություն և այլն: Միտանական մշակույթի մի շարք ավանդույթներ Հայկական լեռնաշխարհում պահպանվել ու շարունակել են զարգանալ նաև ավելի ուշ դարաշրջաններում: Նպատակահարմար ենք գտնում Հայկական լեռնաշխարհում հին հայկական մշակույթին անմիջականորեն նախորդող երկաթեդարյան մշակույթը՝ վաղից մինչև ուշ փուլը ներառյալ, անվանել հնագույն հայկական մշակույթ:

Соображения по поводу некоторых историко-культурных процессов на территории Армянского нагорья в эпоху поздней бронзы и раннего железа

Гарегин Туманян
НАН РА старший научный сотрудник Института археологии и этнографии, д.и.н.

Ключевые слова - Армянское нагорье, Митанни, Арк, Айк, армянская культура, погребение, печать, колесница.

Сформировавшееся в Северной Месопотамии и на юге Армянского нагорья царство Митанни занимало огромную территорию, которую в историографии принято называть «плодородным полумесяцем». В войне с Ассирией при Салманасаре I Митанни и его союзники потерпели тяжелое поражение, но борьба против экспансионистских амбиций Ассирии не прекратилась. Мощными центрами сопротивления стали провинция Харк в области Туруберан и провинция Арагацотн в области Айрарат Армянского нагорья. Это, вероятно, являлось следствием миграции на север различных групп населения, не желавших мириться с ассирийским господством. О том свидетельствуют как археологические данные и топонимические параллели, так и сохранившиеся в трудах армянских историков сведения, почерпнутые из легенды «Айк и Бел». В надписях Тукульти-Нинурты I речь идёт о завоевании непокорной страны Кадмухи и наложении на неё дани. Параллели некоторых митаннийских топонимов присутствуют на Армянского нагорье. Отсюда можно сделать вывод, что в рассматриваемый период население Митанни мигрировало в двух направлениях: на северо-запад и северо-восток. Культурные связи между народами Митанни и Армянского нагорья охватывали различные сферы: письменность, военное дело, глиптика, металлообработка, гончарное дело и т.д. Часть митаннийских традиций сохранялась и успешно развивалась на Армянском нагорье и в более поздние эпохи. Культуру железного века на Армянском нагорье, непосредственно предшествовавшую древнеармянской культуре (от позднего периода до ранней фазы включительно), представляется целесообразным именовать древнейшей армянской культурой.

* * *

Մուտք: Հայկական լեռնաշխարհի հարավային և կենտրոնական շրջանների բնակչությունը մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսից սկսած ներգրավված էր Հին Արևելքի հզոր տերություններից մեկի՝ Միտանիի[1] պետականության ոլորտում [Տիրացյան,

[1] Մենք գերադասում ենք «Միտանի» գրելաձևը «Միտաննի» կամ «Միտտանի» ձևերից, քանի որ Շուտտարնա I-ի կնիքում առկա է «Մաիտանիի արքա» տիտղոսը [Քոսյան, 2013, 395]: «Միտանի» գրելաձևը մոտ է թե՛

1966, 88; Аветисян, 1984, 5, 9-10], իսկ Ծոփքն ու Աղձնիքը առնվազն դաշնակցային հարաբերությունների մեջ էին տարածաշրջանում գերիշխող այդ տերության հետ: Տարածքը, որտեղ մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ քառորդում (մ.թ.ա. XVII դարում) կազմավորվեց Միտանին, ընկած է Հայկական Տավրոսից հարավ՝ Եփրատի մեծ ոլորանի ու Տիգրիսի վերին հոսանքի միջև [Քոսյան, 2013, 389; von Dassow, 2022, 455], այսինքն, Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհի հարավային մասում: Մեզ հետաքրքրում են Միտանիի թագավորության փլուզման հետևանքով տարածաշրջանում տեղի ունեցած փոփոխությունները, հատկապես Ասորեստանի գերիշխանությանը համակերպվել չկամեցող բնակչության արտագաղթերը դեպի Հայկական լեռնաշխարհ: Նման էթնիկական տեղաշարժերը հավանական են, մասնավորապես, Միտանիի անկմանը հաջորդող պատմական ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. XIII դարի վերջին քառորդում – XII դարի սկզբում[1]: Համահունչ մի ավանդազրույց է առկա նաև հայ պատմիչների երկերում, որի իրադարձությունները ևս կարելի է վերագրել մ.թ.ա. XIII դարի վերջին:

Պատմական տեղեկություններ: Իր հզորության գագաթնակետին Միտանիի թագավորությունը զբաղեցնում էր հսկայական տարածք, որը պատմագիտության մեջ ընդունված է անվանել «բերրի/արգավանդ կիսալուսին» (Նկ. 1)[2]: Ուսումնասիրողների կարծիքով, Միտանիի ազդեցության գոտին հյուսիս-արևմուտքում տարածվել է Եփրատի հովտով դեպի վեր և հասել մինչև Արածանիի հետ միախառնման վայրը: Խաթթիի Թուդխալիյաս II արքայի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև կնքված պայմանագրի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ Իսուվան (Ծոփքը), հավանաբար, դաշնակցային հարաբերությունների մեջ էր Միտանիի հետ: Այդ տերության ազդեցության ոլորտում էին գտնվում Հայկական Տավրոսից հարավ ընկած շրջանները, արևելքում՝ Բոհտան/Ջերմ ու Մեծ Զաբ գետերի ավազանները ներառյալ: Տուշրաթթա արքայի վկայությամբ [Вильхельм, 1992, 86; Քոսյան, 2013, 403]՝ Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները, որոնք գտնվում էին Եփրատ գետից արևելք, ներառված էին Միտանիի պետական համակարգում [Ավետիսյան, 2002, 41]: Մյուս կողմից, Հայաստանում միտանական բազմաթիվ կնիքների գտնվելու իրողությունը հուշում է, որ Միտանիի քաղաքական ազդեցությունը տարածվել է ավելի հյուսիս՝ ընդգրկելով

սկզբնականին՝ ինքնանվանմանը, թե՛ այժմ ընդունված ձևերին, որոնց փոփոխելը մեր խնդիրը չէ: Ամեն դեպքում, պետության անվանումը հնարավոր է ստուգաբանել միայն ելնելով «Մահտանի» գրելաձևից:

[1] Ուսումնասիրողները բազմիցս անդրադարձել են քննարկվող ժամանակաշրջանում հակառակ ուղղությամբ՝ Հայկական լեռնաշխարհից դեպի Հյուսիսային Միջագետք էթնիկական տեղաշարժերին, որոնք հայտնի են ասուրական արձանագրություններից [Дьяконов, 1951, № 10, № 13; Սարգսյան, 1992, 42, 48; Քոսյան, 1991, 75-77; Քոսյան, 1994, 253–254; Ավետիսյան, 1994, 244]:

[2] Այս եզրն իր մեջ ներառում է Միջերկրական ծովի արևելյան ափից կիսաշրջանաձև մինչև Պարսից ծոց շարունակվող տարածքը [Breasted, 1914, 56-57]:

Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանները [Ավետիսյան, 2002, 41]։ Միտանին ժամանակի նշանավոր թագավորություններից էր, որի ռազմական հզորության հիմք էր հանդիսանում բանակը՝ մարտակառքերի իր զորամիավորումներով [Янковская, 1989, 189; Քոսյան, 2013, 391]։ Պետության մայրաքաղաքը Վաշշուգ/կանին էր, որը, հավանաբար, գտնվում էր Խաբուր գետի հյուսիսային ավազանում։ Ասորեստանի հետ պատերազմում՝ Սալմանասար I-ի օրոք, Միտանին և նրա դաշնակիցները ծանր պարտություն են կրում։ Խաթթի-Ասորեստան հակամարտությունը լուծվում է Նիխրիյայի ճակատամարտով, որը, գրավոր աղբյուրի համաձայն, ավարտվում է Թուդխալիյաս IV-ի նկատմամբ Թուկուլթի-Նինուրտա I-ի հաղթանակով [Քոսյան, 2022, 194-195; Քոսյան, Գրեկյան, 2024, 277]։ Խեթահպատակ Միտանին և Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան տարածաշրջանները, կորցնելով իրենց ինքնիշխանությունը, հայտնվում են հաղթանակած Ասորեստանի ազդեցության ոլորտում [Аветисян, 1984, 100-102; Ավետիսյան, 2002, 96; Քոսյան, 2013, 398]։

Հայ պատմիչների հաղորդումներն ու հնարավոր հետևությունները։ Մովսես Խորենացին՝ հղելով Մար Աբասին, և Սեբեոսը (Անանունը) հաղորդում են, որ Հայկը, չկամենալով հնազանդվել Բելին, Բաբելոնից գնում է Արարադի երկիրն ու բնակվում լեռան ստորոտի դաշտավայրում[1]։ Այնուհետև, կալվածքն ու տունը ժառանգություն թողնելով իր թոռ Կադմոսին, շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք ու բնակություն հաստատում բարձրավանդ մի դաշտում, որն անվանակոչում է Հարք [Մովսէս Խորենացի, 1913, 33; Սեբէոս, 1979, 48]։ Պատմահայրը, կարծես թե, հիշատակում է Հայկի՝ Բաբելոնում հայտնվելու հանգամանքները՝ ակնարկելով, որ Բելին հաջողվել էր գրավել նրա երկիրը։ Մեր պատմիչները չեն հայտնում այն երկրի անունը, որտեղ իշխել է այդ «քաջ և երևելի» անձնավորությունը, իսկ ուսումնասիրողներն այն նույնացնում են Կումենուի հետ [Հմայակյան, 1992, 125-127][2]։ Այս հարցում մեզ կարող է օգնել նաև Տուրուբերանի Հարք գավառի[3] ընդարձակ անվանումը՝ *Հարք-Խնուս*, որով այն հայտնի էր ժողովրդի մեջ [Մելիքեան, 1964, 3]։ Խնուս/Խանուս, Խընըս բերդաքաղաքը Հարք գավառի կենտրոնն էր [Հակոբյան և այլք, 1988, 754]։ Հավանական է, որ Հարքում հիմնադրված բերդավանը կոչված լինի Կումենուի Խունուսու քաղաքի անունով։ Ուշագրավ է, որ այդ բնակավայրը կումենուցիների հենակետերից էր, որը, ըստ Թիգլաթպալասար I-ի տարեգրությունների, նվաճվել, բլուրների ու վարելահողի է վերածվել [Дьяконов, 1951, 274, 279 (№ 10, № 13)]։

[1] Պատմիչները հավանաբար հիշատակել են Կորդուքի Արարադ (Նիբուր, Ջուդի դաղ) լեռը [Երեմյան, 1963, 39, 60; Арутюнян, 1985, 98, 99, 120]։

[2] Հիշյալ աշխատությունում քննարկվող պատմական իրադարձությունների ժամանակը, երբ Հայկի տոհմը լքում է Արարադ լեռը, համարվում է մ.թ.ա. 1110 թվականը։ Կորդվաց լեռների շրջանում Կումենուի տեղայնացման մասին տե՛ս նաև Պետրոսյան, 1997, 151-153։

[3] Կարելի է հավաստի համարել այն պնդումը, որ Հարք գավառը համապատասխանում է ^{KUR}Arhi երկրին [Սարգսյան, 1992, 39], որը հիշատակված է Մուշում հայտնաբերված Մենուայի ուրարտական սեպագիր արձանագրությունում [Арутюнян, 2001, 86-88 (№ 88); Salvini, 2008, 195-196 (A 5-7)]։

Կումենուն, ըստ երևույթին, գտնվում էր Արևելյան Խաբուրի հովտում, Կադմուխիի և Մուծածիրի հարևանությամբ [Арутюнян, 1985, 119-120]: Հայկյանների ընթացքը դեպի Հարք ուրվագծում է Միտանիից դեպի Հայկական լեռնաշխարհ բնակչության տեղաշարժի հյուսիսարևմտյան ուղին:

Թուկուլթի-Նինուրտա I-ի արձանագրություններում խոսք է գնում անհնազանդ Կադմուխի երկիրն[1] ամբողջությամբ նվաճելու և Շերեշե ամրացված քաղաքը գրավելու մասին, որի պաշտպանների արյունով նա «ոռոգել» է շրջակա լեռները [Дьяконов, 1951, № 10]: Ասսուրական արքայի տարեգրության այս հատվածի շարունակությունն է ասես հայ պատմագիրների կողմից նկարագրված Կադմոսի տագնապահար փախուստը Հայկի մոտ [Մովսէս Խորենացի, 1913, 34; Սեբէոս, 1979, 49]: Կարևոր է ասորեստանյան հիշյալ արձանագրության մեջ հիշատակված քաղաքի անունը՝ Շերեշե, որն իր զուգահեռն ունի Հայաստանում: Նման ձևով է կոչվում Արարատյան դաշտավայրի հնագույն բնակավայրերից մեկը, որը հիշատակել է Խորենացին: Մեր ուսումնասիրություններից մեկում փորձել ենք ցույց տալ, որ ուրարտական ժամանակաշրջանում հայտնի Էթիունիի Արդինը/ե քաղաքը համապատասխանում է Խորենացու հիշատակած Արտիմէդին: Այն գտնվում էր նշանավոր հնավայր Շրեշ բլուրից ոչ հեռու [Թումանյան, 2012, 199-201, 205-206]: Հետաքրքիր է, որ իրարից շատ հեռու չէին գտնվում նաև Շերեշեն և Մահկերտ տուն գավառի Արդինը/Մուծածիր քաղաքը: Այս զույգ տեղանունների առկայությունը և՛ Հայկական լեռնաշխարհի հարավում, և՛ Արարատյան դաշտավայրում հուշում է էթնիկական տեղաշարժի մասին, տվյալ դեպքում՝ հարավից դեպի հյուսիս: Այդ տեղաշարժի մի դրվագը կարելի է վերականգնել Ամատունի նախարարական տան օրինակով, որի անունը սերտորեն առնչվում է Մատիա/ենե երկրին [Ադոնց, 1987, 465, 466], որը հարավ-արևելքից սահմանակից էր Արմենիային [Հերոդոտոս, V, 52]: Նախկինում Մատիանե երկրի տարածքն ընդգրկված էր հնագույն Մ(ա)իտանի պետության սահմաններում, իսկ *մատիեն* էթնոնիմը նույնական է համարվում Միտանի պետության անվանը [Дьяконов, 1968, 38]: Ամատունիները նախ հիմնավորվել են Շավարշանում (Արտազ), այնուհետև՝ Օշականում (Արագածոտն) [Toumanoff, 1963, 197]: Նրանց ընթացքը դեպի Արարատյան դաշտավայր ուրվագծում է Միտանիից դեպի Հայկական լեռնաշխարհ բնակչության տեղաշարժի հյուսիսարևելյան ուղին:

Այսպիսով, տարաձայնություններ են ի հայտ գալիս «Հայկի ու Բելի» առասպելի «պատմական հիմքի» կապակցությամբ ժամանակագրական առումով նախկինում հայտնված տեսակետի հետ՝, քանի որ Միտանիի փլուզումը տեղի է ունեցել մ. թ. ա. 1110 թ. նկարագրվող իրադարձություններից ավելի քան մեկ դար առաջ: Հիշենք, որ ըստ Խորենացու, Բելը Աստվածաշնչում հիշատակված Ներբրովթն է [Մովսէս Խորենացի, 1913,

[1] Հայ պատմագրության մեջ հիշատակվում է *Տուն Կադմեայ* ձևով:

20], որի իրական նախատիպը, հետազոտողների կարծիքով, Ասորեստանի Թուկուլթի-Նինուրտա I արքան է, Սալմանասար I-ի որդին [Дьяконов, 1988, 102]: Թուկուլթի-Նինուրտա I-ի թագավորելու ժամանակահատվածը (≈մ.թ.ա. 1244-1208 թթ.) համընկնում է Միտանիում արքայական հարստության վերացման ժամանակաշրջանի հետ (≈մ.թ.ա. 1220-ական թթ.) [Քոսյան, 2013, 403]: Բացի այդ, Թուկուլթի-Նինուրտա I-ի թագավորության ամենանշանակալից իրադարձությունն է համարվում Բաբելոնի նվաճումը [Дьяконов, 1988, 103], որն ավելի համահունչ է Խորենացու հաղորդմանը՝ Հայկի հենց Բաբելոնից հեռանալու մասին: Կադմուխիի գրավումը [Янковская, 1989, 188] նույնպես կարող էր աղբյուր հանդիսանալ Հայկի մոտ Կադմոսի փախուստի պատառիկի ստեղծման համար: Նկարագրվող իրադարձությունները կարող էին տեղի ունենալ մ.թ.ա. XIII դարի վերջին քառորդում:

Մշակութային հիշողություն և ժառանգորդություն: Տեղանվանաբանությունը: Հին տեղանունների կիրառությունը բնակության նոր վայրերում՝ համայնքի հիշողության թե՛ արձագանքն է, թե՛ խթանիչը: Ստորև բերվում են այն տեղանունները, որոնք առկա են ինչպես Միտանիում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհում. Խունուսու – Խ(ա)նուս-Հարք [Մելիքեան, 1964, 3], Ուրկեշ (Թել Մոզան) [Kharobi, Buccellati, 2017, 167-168] – Արճեշ, Արդինը/ե Մուծաձիր – Արդինը/Արտիմէդ (Մեծամոր), Շերէշե քաղաք – Շրէշ բլուր, Վաշշուգ/կանի/Ուշշուկանի [Քոսյան, 2013, 396] – Օշական/Ուշագան[1], Մեհ/խրի [Luckenbill, 1926, 50, 52; Grayson, 1987, 250] – Մեղրի:

Տեղանվանաբանության ցանկի դիտարկումից երևում է, որ միտանական որոշ տեղանուններ իրենց զուգահեռներն են գտնում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում, իսկ դրանց մեծ մասը՝ գրեթե անփոփոխ, ի հայտ է գալիս Արևելյան Հայաստանում: Այդ իրողությունից կարելի է եզրակացնել, որ քննարկվող ժամանակաշրջանում Միտանիի բնակչության արտագաղթը տեղի է ունեցել երկու տարբեր ուղղություններով՝ դեպի հյուսիս-արևմուտք և հյուսիս-արևելք: Ըստ որում, Հայկական լեռնաշխարհի արևելքում տեղադրված այդ բնակավայրերից մի քանիսը (Արդինը/Արտիմեդ (այժմ՝ Մեծամոր), Շրեշ բլուր, Օշական) գտնվում են իրար այնքան մոտ, որ պատահական զուգադիպությունը գրեթե բացառվում է:

Գիրը: Ուրարտական սեպագիր սալիկների ուսումնասիրությունը հետազոտողներին բերել է այն համոզման, որ գոյություն է ունեցել գրավոր խոսքի ավանդություն, որն ուղղակիորեն հանգում է Միտանիի գրչությանը՝ շրջանցելով նորասուրական գրավոր ավանդությունը: Ուրարտական արագագրում նշանագրերն ու գրելաոճը առավել մոտ են միտանական ձևերին և զգալիորեն տարբերվում են

[1] Վաշշուգանի-Ուշագան նույնացմանը նպաստող մեկ կռվանն էլ այն է, որ Ուշագան/Օշական գյուղը պատկանել է Ամատունիներին (Մովսէս Խորենացի, 1913, 357-358; Ղազար Փարպեցի, 1904, 38), որոնց տոհմական անունը, ինչպես ասվել է, սերտորեն առնչվում է Մատիա/ենե երկրին, իսկ վերջինիս տարածքը ժամանակին ընդգրկված էր Մ(ա)իտանի պետության կազմում, որի մայրաքաղաքը Վաշշուգանին էր:

նորասսուրական ընդունված գրելաձևից [Дьяконов, 1963, 19, 20]: Նորագույն ուսումնասիրություններով բացահայտվել են հավելյալ բազմաթիվ տվյալներ ուրարտական և միտանական սեպագրական դպրոցների նմանությունների վերաբերյալ: Այժմ վստահորեն կարելի է հավաստել, որ սեպագրության ուրարտական դպրոցը, նորասորեստանյան ազդեցությանը հակառակ, հետևում էր միտանական-միջինասորեստանյան սեպագրության ավանդույթներին [Գրեկյան, 2018, 68]:

Կնիքները: Ուղեկցող գույքի կազմում ի հայտ եկած և տվյալ դամբարանի ժամանակագրությանը նախորդող հին առարկաները համարվում են ընտանեկան մասունքներ: Դրանք հիշողության հավերժացման կրողներն են [Pfälzner, 2017, 149, 153]: Համարվում է, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված միտանական կնիքները հիմնականում հանդիպում են վերնախավի դամբարաններում [Դեվեջյան, 2022, 116] և հանդիսանում են իշխանության ու իրավունքի խորհրդանշաններ [Փիլիպոսյան, 1998, 101]: Միտանական «հասարակ/պարզ ոճի» գլանաձև կնիքներ են հայտնաբերվել Արթիկի դամբարանադաշտի № 53, 422, 625 կատակոմբներում [Хачатрян, 1975, 132, 189; Хачатрян, 1979, 78, 105, 133, 625], Քանագեղի № 3 դամբանային համալիրում, Սարուխանի № 10 դամբարանում [Փիլիպոսյան և այլք, 2011, 27], Ներքին Գետաշենի № 1 դամբանաբլուրում [Xnkikyan, 2002, 43, pl. XX, 33, 35]: «Նրբագեղ ոճի» գլանաձև կնիք է հայտնաբերվել Լճաշենի № 97 դամբարանում [Փիլիպոսյան, 1998, 42, աղ. 41, 6]: Հախճապակյա գլանաձև երկու կնիք է գտնվել Գեղարոտի բնակավայրի ուշբրոնզեդարյան շերտում: Դրանք պատկանում են միտանական հասարակ/պարզ ոճի կնիքների դասին և, հավանաբար, պատրաստվել են Ուգարիտում [Бадалян, Смит, 2008, 56, 57]: Միտանական մշակույթի ազդեցությամբ կերտված կնիքներ են հայտնաբերվել նաև Հրազդանում [Փիլիպոսյան, 1998, աղ. 41, 3], Քարաշամբի № 11 դամբարանում, Շամիրամի № 5 մեծ դամբանաբլուրում, Մեծամորի IV դամբանաբլուրում, Լոռի բերդի № 7 և № 25 դամբարաններում [Деведжян, 1981, 37, таб. IX, 3; Դեվեջյան, 2022, 114, 115, աղ. 9, 2, 50, 3, 184, 26], Պառնի գեղում [Хачатрян, 1975, 15, рис. 1], Շիրակավանի № 95 դամբարանում ու վաղերկաթեդարյան բնակատեղիում, Հառիճում, Թռեղքի «Սաֆար խարաբա» դամբանադաշտի № 25 և № 27 դամբարաններում, Շահթախտում, Խարաբագիլանում, Խանլարում, Մինգեչաուրում և Հայկական լեռնաշխարհի այլ դամբարանադաշտերում [Փիլիպոսյան 1998, 42; Погребова, 2000, 146]:

Մեծամորի XI դամբանաբլուրում գտնվել է եգիպտական հիերոգլիֆային արձանագրությամբ սարդիոնե գլանաձև կնիք, որը, հավանաբար, եգիպտական Ամենհոտեպ III փարավոնի նվերն է Բաբելոնի կասիտական հարստության արքա Կուրիգալզու I-ին [Ханзадян, Пиотровский, 1984, 62-65, рис. 1]: Բացի հիշյալ կնիքներից, Մեծամորում (VIII դամբանաբլուր) հայտնաբերվել է խիստ ուշագրավ ևս մեկ արտեֆակտ՝ սեպագիր արձանագրությամբ ագաթե գորտ-կշռաքար (Նկ. 2), որը պատկանել է Բաբելոնի

կասիտական հարստության արքա Բուրնա-Բուրարիաշի որդուն՝ Ուլամ-Բուրարիաշին [Ханзадян и др., 1983, 118, рис. 1, 2]: Հնարավոր է, որ սարդիոնե կնիքը և գորտ-կշռաքարը Մեծամորում են հայտնվել միտանական վերնախավի արտագաղթի հետևանքով:

Մարտակառքերը: Միտանիի ռազմական ուժի «սերուցքն» էին կազմում մարտակառքերը [Stillman, Tallis, 1984, 25; Schwartz, 2014, 272, 273, fig. 1]: Մարտակառքեր կային նաև Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային շրջանների զորամիավորումների կազմում: Այդ մասին են վկայում Լճաշենի ուշբրոնզեդարյան դամբանաբլուրներում (№ 9, 11) հայտնաբերված մարտակառքերը (Նկ. 3) և դրանց մանրակերտերը, որոնք ամրացվել են կառքերի/սայլերի առեղներին (Նկ. 4) (№ 1, 9, 10) [Мнацаканян, 1957, 149-151, рис. 8; Мнацаканян, 1960, 139, 141-143, 147, рис. 4, 5, 7, 13; Мнацаканян, 1961, с. 69, 70, рис. 24,2; Sagona, 2013, 282]: Լոռի բերդի № 7 ուշբրոնզեդարյան դամբարանաբլուրում ևս գտնվել են կառք ու մարտակառքի մանրակերտ (Նկ. 5) [Деведжян, 1981, 27-28; Դեվեջյան, 2022, 18, 84, նկ. 85]: Մարտակառքի մանրակերտ է ծեփված Նոյեմբերյանում հայտնաբերված վաղերկաթեդարյան խեցանոթներից մեկի ուսին:

Զենքերից կարելի է նշել Նուզիում հայտնաբերված շրջանակավոր երկաթե դաստապանով բրոնզե դաշույնը, որը կապվում է Ներգալ աստծո պաշտամունքի հետ [Starr, 1937, pl. 125, KK2]: Շրջանակավոր դաստապանով դաշույնները լայն տարածում են ստանում Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. XVI-XIII դարերում [Փիլիպոսյան, 1999, 34, 35]: Ուշագրավ է այն փաստը, որ Ներքին Գետաշենի № 1 դամբանաբլուրում շրջանակավոր դաստապանով բրոնզե դաշույնի հետ հայտնաբերվել են միտանական պարզ ոճի կնիքներ [Xnkikyan, 2002, 43, pl. XX, 33, 35]: Ուսումնասիրողները շոշափել են ևս մեկ իրողություն՝ այն դամբանադաշտերում, որոնցում հայտնաբերվել են առաջավորասիական տիպի դաշույններ, գտնվել են նաև միտանական կնիքներ [Пицхелаури, 1979, 79-81] և ապակե ուլունքներ:

Նուզիում գտնվել է նաև խողովակակոթառ բրոնզե նիզակ՝ բացվածք ունեցող կոթառով: Սրա գեղարդը ծալված է, հնարավոր է՝ դիտավորյալ կոտրված [Starr, 1937, pl. 125, N]: Քարաշամբի վաղերկաթեդարյան № 119 դամբարանում հայտնաբերվել է ճիշտ նույն տեղից և նույն դիրքով ծալված փետրաձև խողովակակոթառ երկաթե նիզակ, որի գեղարդն օժտված է ջլաղեղով, իսկ կոթառը՝ երկար բացվածքով ու հիմքի մոտ՝ բրոնզե օղով:

Խեցեղենը: Հյուսիսային Միջագետքում հայտնի այսպես կոչված «միտանական խեցեղենը», ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում մեծ քանակությամբ ի հայտ է գալիս նաև Հայկական լեռնաշխարհում: Նուզիի և Լճաշենի ուշբրոնզեդարյան հենակ-պատվանդանների նմանությանը ուշադրություն է դարձրել Լ. Ա. Պետրոսյանը: Կարելի է նշել նաև Թել Բիլլայի խուրրիական շերտում հայտնաբերվածի [Speiser, 1933, pl. LXIII] և

Լոռի բերդի № 2 դամբարանի «բուրանոթների» ոճական ընդհանրությունները [Деведжян, 1981, таб. X, 1, 3; Դեվեջյան, 2022, աղ. 1, 5, 142, 1, 4]: Հայաստանի վաղերկաթեդարյան համալիրներում հանդես են գալիս ձվաձև իրանով կարճավիզ անոթներ, որոնց նախօրինակները Նուզիի ուշբրոնզեդարյան խեցեղենում են: Ներճկված վզով ու աղեղնաձև կանթով վաղերկաթեդարյան սափորները չեն հանդիպում Հայաստանի ուշբրոնզեդարյան մշակույթում, սակայն լավ հայտնի են Ուրկեշի միտանական հորիզոնում: Նույնը վերաբերում է օղակաձև կամ հարթ նստուկով, ուղիղ կամ քիչ թեք պսակով կողավոր թասերին [Kelly-Buccellati, 2020, 250, 251, fig. 4, 5, 8. Stein 1984, pl. II, 1], որոնց զուգահեռները Գառնիում և Մեծամորում են [Խանզադյան, 1969, 128, նկ. 97; Խանզադյան և այլք, 1973, աղ. XIV, 8, XLII, 5]: Վերջինները հանդիպում են նաև Թել Բիլլայում [Stein, 1984, pl. VIII, 8-10], Նուզիում, Թել Աքրահում, Թել Ալ-Ռիմահում [Othman, 2018, 362, pl. 1, 1-3]: Մեծամորում առկա են նաև շեշտված կամ օղակաձև նստուկով ու ներճկված պսակով թասեր [Խանզադյան և այլք, 1973, 50, նկ. 70, աղ. XIV, 4], որոնք ակնհայտորեն համադրելի են Թել Բիլլայի [Speiser, 1933, pl. LI, 4, 7] ու Դիալայի հովտի նույն հատկանիշներով անոթներին: Դիալայի ավազանի հնավայրերին բնորոշ են բազմաշար ուռուցիկ գոտիներով զարդաբանված ոչ մեծ կարասները, որոնց նմանակները վաղ երկաթի դարաշրջանում ի հայտ են գալիս Մեծամորում [Խանզադյան և այլք, 1973, 39, նկ. 48], Ագարակում: Չագար բազարի, Նուզիի, Աղձնիքի (Մուսլումանթեփե) գլանաձև, հատակի մոտ քիչ նեղացող անոթները (Stein, 1984, pl. IV, 8, 10; VII, 1) ևս ի հայտ են գալիս Մեծամորի «հրդեհված» շերտում [Խանզադյան և այլք, 1973, աղ. X, 3, 4] ու Արմավիրի վաղերկաթեդարյան դամբարաններից մեկում [Փիլիպոսյան, 2001, 19, աղ. 2, 3]: Նուզիում ու նմանատիպ համալիրներում տարածված հարթ նստուկով ու քիչ լայնացող եզրերով բաժակատիպ գավերը [Stein, 1984, pl. V, 20; VII, 1] հանդիպում են Հայաստանի հուշարձաններում՝ Լոռի բերդ [Դեվեջյան, 2022, աղ. 131, 3, 235, 3], Արթիկ [Хачатрян, 1979, 274]: Միտաննական խեցեղենին բնորոշ «հասկաձև» կամ «եղեւնաձև» խորադիր զարդաբանվածքը [Starr, 1937, pl. 46, C-E] կարելի է տեսնել Հայաստանի ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան հնավայրերի (Կարմիր բերդ, Գեղարոտ, Ծաղկահովիտ, Լոռի բերդ, Արթիկ, Թալին, Գառնի, Մեծամոր և այլն) տարատեսակ խեցանոթների մակերևույթներին, իսկ ձվածիր փոսիկներով ուռուցիկ գոտին (Թել Բրաք) [Oates et al., 1997, 227, fig. 622] հանդիպում է Ագարակում հայտնաբերված մի կարասի վրա:

Հնագույն հայկական մշակույթ: Հիմնվելով Գ. Ա. Տիրացյանի հիմնարարար աշխատությունում [Тирацян, 1988, 31, 34, 35, 40-45, 71-74] նշված վաղ երկաթի դարի և հին հայկական մշակույթների ակնհայտ առնչություններին, նախկինում նպատակահարմար ենք գտել հին հայկական մշակույթին անմիջականորեն նախորդող երկաթեդարյան մշակույթը՝ իր վաղ, միջին և ուշ փուլերով, անվանել *հնագույն հայկական* [Թումանյան,

2005, 48]: Էթիունյան և հնագույն հայկական մշակույթների նույնականացման հնարավորությունը մատնանշող կռվան է նաև *հայ* ցեղանվան առնչվածությունը հնդեվրոպական **poti-* «տեր, տիրակալ» արմատին, որից ածանցված **հաթիյո-* ձևը ուրարտական սեպագրերում կարող էր արձանագրվել *էթիու-* ձևով: Հետևաբար, ուրարտական դարաշրջանում հնագույն հայկական ցեղերի բնակեցման տարածաշրջաններից մեկն էր ընկալվում Էթիունի/Էթիուխի երկիրը, որը մոտավորապես համապատասխանում էր հետագա Այրարատ նահանգին [Պետրոսյան, 1987, 65; Петросян, 1991, 120-124, 129 և այլն]:

«Հայկի ու Բելի» առասպելի պատմական հիմքը քննարկելիս հնարավոր համարվեց, որ առասպելում նկարագրվող իրադարձությունները տեղի ունեցած լինեն մ.թ.ա. XIII դարի վերջին քառորդում: Այսինքն, ժամանակագրական առումով նույնպես առարկություն չի կարող հարուցել հնագույն հայկական մշակույթի առկայությունը Հայկական լեռնաշխարհի արևմտյան որոշ նահանգներում՝ մասնավորապես Տուրուբերանում: Այստեղ էլ վաղ երկաթի դարաշրջանի սկիզբը կապվում է հնագույն հայկական մշակույթի կազմավորման հետ:

Այսպիսով, հնագույն հայկական պետականության և մշակույթի կազմավորման տարածաշրջաններից էին Տուրուբերանը և Այրարատը: Տուրուբերանում առանձնանում էր Հարքը՝ Խնուս կենտրոնով, Այրարատում՝ ուրարտական աղբյուրների Ազա երկիրը՝ Արդինը/Արտիմեդ քաղաքով: Հենց այս նահանգներն են Բարձր Հայքի հետ համարվել հայ ժողովրդի կազմավորման հիմնական օջախները, որոնց հոգևոր կենտրոնները՝ Աշտիշատն ու Արմավիրը, իրենց ծիսակատարություններով ու հնաբույր առասպելներով, հռչակված էին ոչ միայն հայ ազգաբնակչության շրջանում [Հարությունյան, 2000, 194, 195]:

Նկար 1. Բերրի/արգավանդ կիսալուսնի քարտեզը [ըստ Breasted 1914, 56-57]:



Նկար 2. Մեծամորի VIII դամբանաբլրում հայտնաբերված ագաթե գորտ-կշռաքարը [ըստ Ханзадян и др. 1983, 115, 118, рис. 1, 2]:



Նկար 3. Լճաշենի № 11 դամբանաբլրում պեղված մարտակառքը [ըստ Мнацаканян 1960, 147, рис. 13]:

Նկար 4. Լճաշենի № 1 դամբանաբլրում հայտնաբերված մարտակառքի բրոնզե մանրակերտը [նկարը մեզ է տրամադրել Է. Վ. Խանզադյանը]:

Նկար 5. Լոռի բերդի № 7 դամբարանում գտնված մարտակառքի բրոնզե մանրակերտը [ըստ Դեվեջյան 2022, 84, նկ. 85]:

Գրականության ցանկ

Adonts' 1987- Adonts' N., Hayastany Hustinianosi darashrjanum, Yerevan, «Hayastan» hrat., 1987, 639 ej:

Avetisyan 1994- Avetisyan H., Hnaguyn et'nikakan teghasharzhery yev Haykakan lerrnashkharhy m.t'.a. III-I hazaramyaknerum, Patmabanasirakan handes, № 1-2, 1994, ej 239-246. **(in Armenian)**

Avetisyan 2002- Avetisyan H., Haykakan lerrnashkharhi yev Hyusisayin Mijagetk'i petakan kazmavorumneri k'aghak'akan patmut'yuny m.t'.a. XVII-IX darerum, Yerevan, «Yerevani hamalsarani hrat.», 2002, 212 ej. **(in Armenian)**

Grekyan 2018- Grekyan Ye., Urartakan sepagrakan dprots'y, Vem, N 2, 2018, ej 44-73. **(in Armenian)**

Devejyan 2022- Devejyan S., Lorri berd, III. ushbronzedaryan dambaranner Yerevan, «HH GAA hnagitut'yan yev azgagrut'yan instituti hrat.», 2022, 392 ej. **(in Armenian)**

Yeremyan 1963- Yeremyan S., Hayastany yst "Ashkharhats'voyts'"-i, Yerevan, «HSSRR GA hrat., 1963, 156 ej: **(in Armenian)**

T'vorosyan yev aylk' 2002- T'vorosyan RR., Khnkikyan O., Petrosyan L., Hin Shirakavan, Yerevan, «Gitut'yun» hrat., 2002, 259 ej. **(in Armenian)**

T'umanyan 2005- T'umanyan G., Ashtaraki Urruts'y (Srbazan tsarreri hnaguyn pashtamunk'i hetk'ery), Yerevan, «Mughni» hrat., 2005, 60 ej: **(in Armenian)**

T'umanyan 2012- T'umanyan G., «Vardges mankan» vipakan patarriki nor meknabanut'yun, Patmabanasirakan handes, N 2, 2012, ej 198-209: **(in Armenian)**

Khanzadyan 1969- Khanzadyan E., Garrni IV, Yerevan, «HSSH GA hrat.», 1969, 240 ej. **(in Armenian)**

Khanzadyan yev aylk' 1973- Khanzadyan E., Mkrtch'yan K., Parsamyan E., Metsamor, Yerevan, «HSSH GA hrat.», 1973, 214 ej. **(in Armenian)**

Hakobyan yev aylk' 1988- Hakobyan T'., Melik'-Bakhshyan S., Barseghyan H., Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri barraran, h. 2, Yerevan, «Yerevani hamalsarani hrat.», 1988, 992 ej: **(in Armenian)**

Harut'yunyan 2000- Harut'yunyan S., Hay arraspelabanut'yun, Beyrut', «Hamazgayini Vahe Set'ean tparan», 2000, 527 ej: **(in Armenian)**

Herodotos 1986- Herodotos, Patmut'yun iny grk'its' (t'argm. S. Krkyasharyani), Yerevan, «HSSH GA hrat.», 1986, 652 ej: **(in Armenian)**

Hmayakyan 1992- Hmayakyan S., Hayk nahapeti masin arraspeln u Kibsha k'aghak'y Niburi lerrnerum, Patma-banasirakan handes, N 1, 1992, ej 125-132. **(in Armenian)**

Ghazar P'arpets'i 1904- Ghazaray P'arpets'woy Patmut'iwn Hayots' yev T'ught' arr Vahan Mamikonean, ashkhatut'eamb G. Ter-Mkrtch'ean yev St. Malkhasean. Tp'ghis, «Aragatip Mnats'akan Martiroseants'i», 1904, 234 ej. **(in Armenian)**

Melik'ean 1964- Melik'ean Ye., Hark'-Khnus, Ant'ilias, «Tparan Kat'voghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy», 1964, 486 ej: **(in Armenian)**

Movses Khorenats'i 1913- Movsisi Khorenats'woy Patmut'iwn hayots', ashkhatut'eamb M.Abeghean yev S. Harut'iwnean, Tp'ghis, «Aragatip M. Martiroseants'i», 1913, 396 ej: **(in Armenian)**

Petrosyan 1987- Petrosyan A., Hayki yev Beli arraspeli verlutsut'yan p'vordz, khmb., Vardumyan D., Hanrapetakan gitakan nstashrjan nvirvats 1984-1985 t't'. azgagrakan yev banagitakan dashtayin hetazotut'yunneri hanragumarin, Zekuts'umneri t'ezisner, Yerevan, «HSSH GA hrat.», 1987, ej 64-66. **(in Armenian)**

Petrosyan 1997- Petrosyan A., Arami arraspely hndevropakan arraspelabanut'yan hamatek'stum yev hayots' azgatsagman khndiry, Yerevan, «Van Aryan» hrat., 1997, 206 ej: **(in Armenian)**

Sargsyan 1992- Sargsyan G., Movses Khorenats'u «Hayots' patmut'yuny» yev sepagrakan aghbyurnery (Hayki yev Haykyanneri arraspeli patmakanut'yan yev zargats'man p'uleri khndiry), Patma-banasirakan handes, N 2-3, 1992, ej 27-50. **(in Armenian)**

Sebeos 1979- Sebeos, Patmut'iwn, ashkhatasirut'yamb G. Abgaryani, Yerevan, «HSSH GA hrat.», 1979, 445 ej. **(in Armenian)**

Tirats'yan 1966- Tirats'yan G., Hin haykakan petut'yan arrajats'umy, Patma-banasirakan handes, N 4, 1966, ej 83-102. **(in Armenian)**

P'iliposyan 1998- P'iliposyan A., Haykakan lerrnashkharhi knik'nery Hin Arevelk'i knk'agortsut'yan hamakargum, Yerevan, «Arame» hrat., 1998, 248 ej. **(in Armenian)**

P'iliposyan 1999- P'iliposyan A., Hin Arevelk'i shrjanakavor dastakov dashuynnern u srery, Hayastani hnagitakan hushardzannery, h. 17, Yerevan, «Zangak-97» hrat., 1999, 150 ej. **(in Armenian)**

P'iliposyan 2001- P'iliposyan A., Vagherkat'edaryan yerku dambaranner Armavirits', khmb., K'alant'aryan A., Harut'yunyan S., Hin Hayastani patmut'yan yev mshakuyt'i harts'er, Gevorg Tirats'yani hishatakin nvirvats gitazhoghovi zekuts'umner, Yerevan, «HH GAA hnagitut'yan yev azgagrut'yan instituti hrat.», 2001, ej 13-19: **(in Armenian)**

P'iliposyan yev aylk' 2011- P'iliposyan A., Gevorgyan L., Zak'yan A., Sarukhani «Pali tak» dambaranadashti nyut'akan mshakuyt'y (m.t'.a. II-I hazaramyakner), Yerevan, «Legal Plyus» hrat., 2011, 82 ej. **(in Armenian)**

K'vosyan 1991- K'vosyan A., Et'nikakan teghasharzhery P'vok'r Asiayum yev Haykakan lerrnashkharhum m.t'.a. XII darum («Tsovi zhoghovurdner», mushker yev urumeats'iner), Patma-banasirakan handes, N 1, 1991, ej 65-78. **(in Armenian)**

K'vosyan 1994- K'vosyan A., Krkin et'nikakan teghasharzheri masin, Patma-banasirakan handes, N 1-2, 1994, ej 247-255. **(in Armenian)**

K'vosyan 2013- K'vosyan A., Mitanni, glkh. khmb., RR. Safrastyan, Hayastani harakits' yerkrneri patmut'yun, h. I, Yerevan, «Zangak» hrat., 2013, ej 389-401. **(in Armenian)**

K'vosyan 2022- K'vosyan A., KHet'akan t'agavorut'yun (k'aghak'akan patmut'yun), Yerevan, «HH GAA arevelagitut'yan instituti hrat.», 2022, 252 ej. **(in Armenian)**

K'vosyan 2024- K'vosyan A., Grekyan Ye., Haykakan lerrnashkharhi mijavayrayin patmut'yuny, Yerevan, «HH GAA hnagitut'yan yev azgagrut'yan instituti hrat.», 2024, 408 ej. **(in Armenian)**

Avetisyan 1984- Avetisyan G., Gosudarstvo Mitanni (voyenno-politicheskaya istoriya v XVII-XIII vv. do n. e.), Yerevan, «Izd. AN ArmSSR», 1984, 130 s. **(in Russian)**

Arutyunyan 2001- Arutyunyan N., Korpus urartskikh klinoobraznykh nadpisey, Yerevan, Izd. «Gitutyun», 2001, 542 s. **(in Russian)**

Badalyan, Smit 2008- Badalyan R., Smit A., Poseleniye Gekharot: osnovnyye rezul'taty raskopok 2005-2006 gg., otv. red. Avetisyan P., Kalantaryan A., Badalyan R., Kul'tura drevney Armenii, XIV, Yerevan, Izd. «Gitutyun», 2008, s. 45-68. **(in Russian)**

Vil'khel'm 1992- Vil'khel'm G., Drevniy narod khurrity. Ocherki istorii i kul'tury, Moskva, Izd. «Nauka», 1992, 158 s. Devedzhyan 1981- Devedzhyan S., Lori-Berd, 1, Yerevan, «Izd. AN ArmSSR», 1981, 86 s. **(in Russian)**

D'yakonov 1951- D'yakonov I., Assiro-vavilonskiye istochniki po istorii Urartu, Vestnik drevney istorii, N 2, 1951, s. 257-356. **(in Russian)**

D'yakonov 1963- D'yakonov I., Urartskiye pis'ma i dokumenty, Moskva-Leningrad, «Izd. AN SSSR», 1963, 144 s. **(in Russian)**

D'yakonov 1968- D'yakonov I., Predystoriya armyanskogo naroda, Yerevan, «Izd. AN ArmSSR», 1968, 264 s. **(in Russian)**

D'yakonov 1988- D'yakonov I., Gorod-gosudarstvo Ashshur i vozniknoveniye Assiriyskogo tsarstva (Sredneassiriyskiy period), red. Bongard-Levin G., Istoriya drevnego Vostoka, ch. 2, Moskva, Izd. «Nauka», 1988, s. 90-110. **(in Russian)**

Mnatsakanyan 1957- Mnatsakanyan A., Raskopki kurganov na poberezh'ye oz. Sevan v 1956g. (predvoritel'noye soobshcheniye), Sovetskaya arkheologiya, N 2, 1957, s. 146-153. **(in Russian)**

Mnatsakanyan 1960- Mnatsakanyan A., Drevniye povozki iz kurganov bronzovogo veka na poberezh'ye oz. Sevan, Sovetskaya arkheologiya, N 2, 1960, s. 139- 152. **(in Russian)**

Mnatsakanyan 1961- Mnatsakanyan A., Lchashenskiye kurgany (raskopki 1956 goda), Kratkiye soobshcheniya Instituta arkheologii AN SSSR, vyp. 85, 1961, s. 66-72. **(in Russian)**

Petrosyan 1991- Petrosyan A., Samonazvaniye armyan i vopros lokalizatsii nositeley protoarmyanskogo yazyka, Vestnik obshchestvennykh nauk, N 5, 1991, s. 120-129. **(in Russian)**

Pitskhelauri 1979- Pitskhelauri K., Vostochnaya Gruziya v kontse bronzovogo veka, Tbilisi, Izd. «Metsniyereba», 1979, 160 s. **(in Russian)**

Pogrebova 2000- Pogrebova M., Pechati mitanniyskogo stilya iz Zakavkaz'ya kak istoricheskiy istochnik, Vestnik drevney istorii, N 4, 2000, s. 145-150. **(in Russian)**

Tiratsyan 1988- Tiratsyan G., Kul'tura drevney Armenii. VI v. do n.e. – III v. n.e. (po arkheologicheskim dannym), Yerevan, «Izd. AN ArmSSR», 1988, 206 s. **(in Russian)**

Khanzadyan 1984- Khanzadyan E., Piotrovskiy B., Tsilindricheskaya pechat' s drevneyegipetskoy iyeroglificheskoy nadpis'yu iz Metsamorskogo mogil'nika, Istoriko-filologicheskiy zhurnal, N 4, 1984, s. 59-65. **(in Russian)**

Khanzadyan i dr. 1983- Khanzadyan E., Sarkisyan G., D'yakonov I., Vavilonskaya girya XVI v. do n. e. s klinopisnoy nadpis'yu iz raskopok Metsamora, Drevniy Vostok, N 4, 1983, s. 113-122. **(in Russian)**

Khachatryan 1975- Khachatryan T., Drevnyaya kul'tura Shiraka, Yerevan, «Izd. Yerevanskogo universiteta», 1975, 278 s. **(in Russian)**

Khachatryan 1979- Khachatryan T., Artikskiy nekropol': Katalog, Yerevan, «Izd. Yerevanskogo universiteta», 1979, 403 s. **(in Russian)**

Yankovskaya 1989- Yankovskaya N., Ashshur, Mitanni, Arrapkhe, otv. red. D'yakonov I., Istoriya drevnego mira, kn. 1, Moskva, Izd. «Nauka», 1989, s. 174-197. **(in Russian)**

Breasted 1914- Breasted J., Earliest man the Orient, Greece, and Rome, Outlines of European history, part I, Boston, New York, Chicago, London, "Ginn and Company", 1914, p. 1-314.

Kelly-Buccellati 2020- Kelly-Buccellati M., The Urkesh Mittani horizon: Ceramic evidence, eds. Cammarosano M., Devecchi E., Viano M, Ancient Near Eastern studies presented to Stefano de Martino on the occasion of his 65th birthday, Zaphon, Münster, "Zaphon Verlag", 2020, p. 237-256.

Kharobi, Buccellati 2017- Kharobi A., Buccellati G., The dignity of the dead. The case of ancient Urkesh and modern Tell Mozan, Syria (2000-1600 BC), Paléorient, No 43/2, 2017, p. 165-175.

Oates et al. 1997- Oates D., Oates J., McDonald H., Excavations at Tell Brak, vol. 1: The Mitanni and Old Babylonian periods, Cambridge & London, "McDonald Institute for Archaeological Research & British School of Archaeology in Iraq", 1997, XXI+296 p.

Othman 2018- Othman A., The Distribution of the Nuzi ware in Northern Iraq and Syria, Polytechnic Journal, vol. 8, no. 2, 2018, p. 347-371.

Pfälzner 2017- Pfälzner P., Cultural memory and the invisible dead: The role of 'old objects' in burial contexts, eds. Bradbury J., Scarre C., Enüaging with the Dead: exploring changing human beliefes about death, mortality and human body, Oxford-Philadelphia, "Oxbow Books", 2017, 288 p.

Sagona 2013- Sagona A., Wagons and Carts of the Trans-Caucasus, eds. Tekin O., Sayar M., Konyar E., Tarhan Armağani. Essays in Honour of M. Taner Tarhan, Istanbul, "Ege Yayinlari", 2013, p. 277-297.

Salvini 2008- Salvini M., Corpus dei testi urartei, vol. I, Roma, "Istituto di studi sulle Civiltà dell'Egeo e del Vicino Oriente", 2008, 653 p.

Schwartz 2014- Schwartz G., Reflections of the Mittani Emergence, eds. Cancik-Kirschbaum E., Brisch N., Eidem J., Constituent, Confederate, and Conquered Space: The Emergence of the Mittani State, Berlin & Boston, "Walter de Gruyter GmbH", 2014, p. 265–277.

Speiser 1933- Speiser E., The pottery of Tell Billa: A preliminary account, The Museum Journal, vol. XXIII, no. 3, 1933, p. 249-308.

Starr 1937- Starr R., Nuzi: Report on the excavations at Yorgan Tepa near Kirkuk, Iraq, conducted by Harvard University in conjuction with the American Schools of Oriental Research and University Museum of Philadelphia 1927-1931, vol. II, Cambridge, "Harvard University Press", 1937, 294 p.

Stein 1984- Stein D., Khabur ware and Nuzi ware: Their origin, relationship, and significance, Assur 4/1: Monographic Journal of the Near East, 1984, p. 1-65.

Stillman, Tallis 1984- Stillman N., Tallis N., Armies of the Ancient Near East 3000 BC to 539 BC, Worthing, "Wargames Research Group", 1984, 208 p.

Toumanoff 1963- Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Washington, "Georgetown University Press", 1963, 599 p.

von Dassow 2022- von Dassow E., Mittani and Its Empire, eds. Radner K., Moeller N., Potts D., The Oxford History of the Ancient Near East, vol. III, Oxford, "Oxford University Press", 2022, p. 455-528.

Xnkikyan 2002- Xnkikyan O., Syunik′ During the Bronze and Iron Ages, Barrington, "Mayreni Publoshing", 2002, 258 p.